Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱԳՐՈՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Ագրովերամշակման վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում:

2. Վարչությունն իր գործունեությունն իրականացնելիս ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով, այլ իրավական ակտերով, Նախարարության կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ:

3. Վարչության կանոնադրությունը հաստատում, փոփոխում և ուժը կորցրած է ճանաչում Նախարարը՝ Նախարարության գլխավոր քարտուղարի ներկայացմամբ:

4. Վարչության կառուցվածքում ընդրգկվում են Վարչության պետը և Վարչության բաժինները:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

5. Վարչության հիմնական նպատակն է՝

իր իրավասության շրջանակներում ագրովերամշակման և պարենային համակարգերի ոլորտներում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Նախարարությանը վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման ապահովումը:

6. Վարչության հիմնական խնդիրներն են՝

1) ագրովերամշակման և պարենային համակարգերի (պարենային անվտանգության և ագրոբիզնեսի, այդ թվում՝ ագրոտուրիզմի) ոլորտներում կատարվող գործընթացների համալիր վերլուծությունների, համապատասխան կանխատեսումների հիման վրա ագրովերամշակման և պարենային համակարգերի զարգացման քաղաքականության մշակումը,

2) ագրովերամշակող արդյունաբերության զարգացման ու ընդլայնման ապահովումը,

3) պարենային անվտանգության մակարդակի բարձրացումը,

4) ագրովերամշակման ոլորտի զարգացման պետական աջակցության ապահովումը,

5) ագրոպարենային ոլորտի տեխնոլոգիական վերազինման աջակցության

ապահովումը,

6) պարենային համակարգերի զարգացման գործընթացին աջակցությունը,

7) ագրովերամշակող և արտահանող ընկերությունների կողմից գյուղատնտեսական հումքի, մասնավորապես՝ պտուղբանջարեղենի, խաղողի և կաթի մթերումների գործընթացի համակարգումը:

III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

7. Վարչության գործառույթներն են՝

1) Ագրովերամշակման և պարենային համակարգերի (պարենային անվտանգության և ագրոբիզնեսի, այդ թվում՝ ագրոտուրիզմի) բնագավառներում ընթացող գործընթացների համալիր հետազոտություններ, վերլուծություններ, գնահատումներ ու կանխատեսումներ և դրանց արդյունքների հիման վրա ագրովերամշակման և պարենային համակարգերի ոլորտների զարգացման քաղաքականության մշակումը և իրականացման ընթացքի ուսումնասիրությունը,

2) Ագրովերամշակման և պարենային համակարգերի բնագավառների իրավական ակտերի, զարգացման ռազմավարությունների ու հայեցակարգերի նախագծերի մշակումը,

3) հիմնական պարենամթերքների ֆիզիկական և տնտեսական մատչելիության պարբերական գնահատմանը մասնակցություն և պարենային անվտանգության մակարդակի բարձրացմանը վերաբերող առաջարկությունների մշակումը և դրանց իրականացման մոնիթորինգին մասնակցությունը,

4) հանրապետության բնակչության կենսապայմաններին, պարենային մթերքների արտադրությանը, վերամշակմանը, իրացմանը, ապրանքաշրջանառությանը և բնակչության եկամուտներին ու սպառմանը վերաբերող հարցերի վերլուծությունը և համապատասխան առաջարկությունների ներկայացումը,

5) հանրապետությունում բնակչության պարենային ապահովության վիճակի, տեղական շուկայում հիմնական պարենամթերքների պահանջարկի և ինքնաբավության մակարդակի ուսումնասիրությունների և վերլուծությունների հիման վրա ներկրումը տեղական արտադրությամբ փոխարինելու նպատակով առաջարկությունների ներկայացումը,

6) մաքսային, հարկային և ոչ հարկային եկամուտների քաղաքականության վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը,

7) պարենային ապահովության ծրագրերի մշակումը, պարենային անվտանգության հիմնախնդիրների գնահատումը, դրանց լուծման մոտեցումների ձևավորմանը և իրականացվող ծրագրերի մոնիթորինգին մանակցությունը,

8) ագրոպարենային ոլորտի տեխնոլոգիական վերազինման աջակցության ծրագրերի մշակում և իրականացվող ծրագրերի ընթացքի ուսումնասիրությունը,

9) գյուղատնտեսական հումքի մթերումների գործընթացի աջակցության ծրագրերի մշակումը և իրականացվող ծրագրերի ընթացքի ուսումնասիրությունը,

10) ագրովերամշակման և պարենային համակարգերի ոլորտներում գործունեություն իրականացնող սուբյեկտների աջակցության ծրագրերի մշակումը և իրականացվող ծրագրերի ընթացքի ուսումնասիրությունը,

11) ագրոպարենային արտադրանքի իրացման համակարգի (լոգիստիկ ենթակառուցվածքների) իրավիճակի ուսումնասիրություն և բարելավմանն ու կատարելագործմանն ուղղված առաջարկությունների և միջոցառումների մշակումը,

12) բարենպաստ առևտրային ռեժիմների ձևավորման և արտաքին շուկաներ մուտք գործելու խոչընդոտները վերացնելու ուղղությամբ առաջարկությունների ներկայացումը,

13) արտաքին շուկաների ուսումնասիրություն և վերլուծություն, տեղական արտադրողների համար արտաքին շուկաների հասանելիության վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը և ագրոպարենային արտադրանքի արտահանման խթանումը,

14) ներմուծման և արտահանման վարչարարական ընթացակարգերի ուսումնասիրություն և դրանց պարզեցման ուղղությամբ առաջարկությունների ներկայացումը,

15) Հայաստանի Հանրապետությունում և արտերկրում կազմակերպվող տոնավաճառների, ցուցահանդեսների և այլ միջոցառումների մասին ագրոպարենային ոլորտի տնտեսվարողներին իրազեկումը և մասնակցության աջակցության առաջարկությունների ներկայացումը,

16) այլ գերատեսչությունների կողմից մշակված ագրովերամշակման և պարենային համակարգերի բնագավառներին առնչվող իրավական ակտերի, ծրագրերի, հայեցակարգերի, տեխնիկական կանոնակարգերի և ստանդարտների նախագծերի ուսումնասիրությունը,

17) պահպանության ենթակա մտավոր սեփականության օբյեկտների՝ օրենքով սահմանված կարգով ներկայացված տեխնիկական հատկորոշումների հաստատման գործընթացի համակարգումը,

18) ագրովերամշակող և արտահանող ընկերությունների կողմից գյուղատնտեսական հումքի, մասնավորապես՝ պտուղբանջարեղենի և խաղողի մթերումների նախապատրաստական աշխատանքների և մթերումների կանխատեսվող ծավալների և գների մասին տեղեկատվության հավաքագրումը, վերլուծությունը և հումքի մթերումների գործընթացի համակարգումը,

19) վարչության բնագավառներին առնչվող հարցերի վերաբերյալ միջազգային պայմանագրերի (համաձայնագրերի) մշակման ու քննարկման գործընթացներին սահմանված կարգով մասնակցությունը,

20) ֆիզիկական և իրավաբանական անձանց նամակների, դիմումների և բողոքների քննարկում և իրավասության սահմաններում բարձրացված հարցերի լուծումն ապահովող առաջարկությունների ներկայացումը,

21) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ագրովերամշակման և պարենային համակարգերի ոլորտները համակարգող ստորաբաժանումների և ոլորտներում գործունեություն ծավալող տնտեսավարող սուբյեկտների հետ համագործակցությունը,

22) պետական մարմիններում և կազմակերպություններում ագրովերամշակման և պարենային համակարգերի ոլորտներին վերաբերող հարցերի քննարկմանը մասնակցությունը,

23) Եվրասիական տնտեսական միության, Եվրամիություն-Հայաստան և միջազգային այլ կառույցների անդամակցությունից բխող համագործակցության շրջանակներում ագրովերամշակման և պարենային համակարգերի ոլորտներին առնչվող խնդիրների լուծման գործընթացին մասնակցությունը,

24) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ վերապահված այլ գործառույթների իրականացումը:

IV. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

8. Վարչությունը կազմված է հետևյալ բաժիններից.

1) Ագրովերամշակման աջակցության բաժին,

2) Պարենային համակարգերի զարգացման բաժին

8. Վարչության բաժիններն իրենց գործառույթներն իրականացնում են միմյանց հետ համագործակցելով:

V.ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

9. Ագրովերամշակման աջակցության բաժնի հիմնական գործառույթներն են.

1) ագրովերամշակման բնագավառում ընթացող գործընթացների համալիր հետազոտություններ, վերլուծություններ, գնահատումներ ու կանխատեսումներ և դրանց արդյունքների հիման վրա ագրովերամշակման ոլորտի զարգացման քաղաքականության մշակումը և իրականացման ընթացքի ուսումնասիրությունը,

2) ագրովերամշակման բնագավառի իրավական ակտերի, զարգացման ռազմավարությունների ու հայեցակարգերի նախագծերի մշակումը,

3) մաքսային, հարկային և ոչ հարկային եկամուտների քաղաքականության վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը,

4) ագրոպարենային ոլորտի տեխնոլոգիական վերազինման աջակցության ծրագրերի մշակումը և իրականացվող ծրագրերի ընթացքի ուսումնասիրությունը,

5) ագրովերամշակման ոլորտում գործունեություն իրականացնող սուբյեկտների աջակցության ծրագրերի մշակումը և իրականացվող ծրագրերի ընթացքի ուսումնասիրությունը,

6) գյուղատնտեսական հումքի մթերումների գործընթացի աջակցության ծրագրերի մշակումը և իրականացվող ծրագրերի ընթացքի ուսումնասիրությունը,

7) այլ գերատեսչությունների կողմից մշակված ագրովերամշակման բնագավառին առնչվող իրավական ակտերի, ծրագրերի, հայեցակարգերի, տեխնիկական կանոնակարգերի և ստանդարտների նախագծերի ուսումնասիրությունը,

8) պահպանության ենթակա մտավոր սեփականության օբյեկտների՝ օրենքով սահմանված կարգով ներկայացված տեխնիկական հատկորոշումների հաստատման գործընթացի համակարգումը,

9) ագրովերամշակող և արտահանող ընկերությունների կողմից գյուղատնտեսական հումքի, մասնավորապես՝ պտուղբանջարեղենի և խաղողի մթերումների նախապատրաստական աշխատանքների և մթերումների կանխատեսվող ծավալների և գների մասին տեղեկատվության հավաքագրումը, վերլուծությունը և հումքի մթերումների գործընթացի համակարգումը,

10) ագրովերամշակման բնագավառին առնչվող հարցերի վերաբերյալ միջազգային պայմանագրերի (համաձայնագրերի) մշակման ու քննարկման գործընթացներին սահմանված կարգով մասնակցությունը,

11) ֆիզիկական և իրավաբանական անձանց նամակների, դիմումների և բողոքների քննարկում և իրավասության սահմաններում բարձրացված հարցերի լուծումն ապահովող առաջարկությունների ներկայացումը,

12) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ագրովերամշակման ոլորտը համակարգող ստորաբաժանումների և ոլորտում գործունեություն ծավալող տնտեսավարող սուբյեկտների հետ համագործակցությունը,

13) պետական մարմիններում և կազմակերպություններում ագրովերամշակման ոլորտին վերաբերող հարցերի քննարկմանը մասնակցությունը,

14) Եվրասիական տնտեսական միության, Եվրամիություն-Հայաստան և միջազգային այլ կառույցների անդամակցությունից բխող համագործակցության շրջանակներում ագրոպարենային ոլորտին առնչվող խնդիրների լուծման գործընթացին մասնակցությունը,

15) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ վերապահված այլ գործառույթների իրականացումը:

10. Պարենային համակարգերի զարգացման բաժնի հիմնական գործառույթներն են.

1) պարենային համակարգերի (պարենային անվտանգության և ագրոբիզնեսի, այդ թվում՝ ագրոտուրիզմի) բնագավառներում ընթացող գործընթացների համալիր հետազոտություններ, վերլուծություններ, գնահատումներ ու կանխատեսումներ և դրանց արդյունքների հիման վրա

պարենային անվտանգության և ագրոբիզնեսի ոլորտների զարգացման քաղաքականության մշակումը և իրականացման ընթացքի ուսումնասիրությունը,

2) պարենային համակարգերի բնագավառների իրավական ակտերի, զարգացման ռազմավարությունների ու հայեցակարգերի նախագծերի մշակումը,

3) հիմնական պարենամթերքների ֆիզիկական և տնտեսական մատչելիության պարբերական գնահատմանը մասնակցություն և պարենային անվտանգության մակարդակի բարձրացմանը վերաբերող առաջարկությունների մշակումը և դրանց իրականացման մոնիթորինգին մասնակցությունը,

4) հանրապետության բնակչության կենսապայմաններին, պարենային մթերքների արտադրությանը, վերամշակմանը, ապրանքաշրջանառությանը և բնակչության եկամուտներին ու սպառմանը վերաբերող հարցերի վերլուծություն և համապատասխան առաջարկությունների ներկայացումը,

5) հանրապետությունում բնակչության պարենային ապահովության վիճակի, տեղական շուկայում հիմնական պարենամթերքների պահանջարկի և ինքնաբավության մակարդակի ուսումնասիրությունների և վերլուծությունների հիման վրա ներկրումը տեղական արտադրությամբ փոխարինելու նպատակով առաջարկությունների ներկայացումը,

6) պարենային ապահովության ծրագրերի մշակումը, պարենային անվտանգության հիմնախնդիրների գնահատումը, դրանց լուծման մոտեցումների ձևավորմանը և իրականացվող ծրագրերի մոնիթորինգին մասնակցությունը,

7) պարենային համակարգերի ոլորտներում գործունեություն իրականացնող սուբյեկտների աջակցության ծրագրերի մշակումը և իրականացվող ծրագրերի ընթացքի ուսումնասիրությունը,

8) ագրոպարենային արտադրանքի իրացման համակարգի (լոգիստիկ ենթակառուցվածքների) իրավիճակի ուսումնասիրությունը և բարելավմանն ու կատարելագործմանն ուղղված առաջարկությունների և միջոցառումների մշակումը,

9) բարենպաստ առևտրային ռեժիմների ձևավորման և արտաքին շուկաներ մուտք գործելու խոչընդոտները վերացնելու ուղղությամբ առաջարկությունների ներկայացումը,

10) արտաքին շուկաների ուսումնասիրությունը և վերլուծությունը, տեղական արտադրողների համար արտաքին շուկաների հասանելիության վերաբերյալ

առաջարկությունների ներկայացումը և ագրոպարենային արտադրանքի արտահանման խթանումը,

11) ներմուծման և արտահանման վարչարարական ընթացակարգերի ուսումնասիրությունը և դրանց պարզեցման ուղղությամբ առաջարկությունների ներկայացումը,

12) Հայաստանի Հանրապետությունում և արտերկրում կազմակերպվող տոնավաճառների, ցուցահանդեսների և այլ միջոցառումների մասին ագրոպարենային ոլորտի տնտեսվարողներին իրազեկումը և մասնակցության ապահովման աջակցության առաջարկությունների ներկայացումը,

13) այլ գերատեսչությունների կողմից մշակված պարենային համակարգերի բնագավառներին առնչվող իրավական ակտերի, ծրագրերի, հայեցակարգերի, տեխնիկական կանոնակարգերի և ստանդարտների նախագծերի ուսումնասիրությունը,

14) պարենային համակարգերի բնագավառներին առնչվող հարցերի վերաբերյալ մի-ջազգային պայմանագրերի (համաձայնագրերի) մշակման ու քննարկման գործընթացներին սահմանված կարգով մասնակցությունը,

15) ֆիզիկական և իրավաբանական անձանց նամակների, դիմումների և բողոքների քննարկում և իրավասության սահմաններում բարձրացված հարցերի լուծումն ապահովող առաջարկությունների ներկայացումը,

16) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պարենային համակարգերի ոլորտները համակարգող ստորաբաժանումների և ոլորտներում գործունեություն ծավալող տնտեսավարող սուբյեկտների հետ համագործակցություն և ոլորտներին վերաբերող հարցերի քննարկմանը մասնակցությունը,

17) պետական մարմիններում և կազմակերպություններում պարենային համակարգերի ոլորտներին վերաբերող հարցերի քննարկմանը մասնակցությունը,

18) Եվրասիական տնտեսական միության, Եվրամիություն-Հայաստան և միջազգային այլ կառույցների անդամակցությունից բխող համագործակցության շրջանակներում պարենային համակարգերի ոլորտին առնչվող խնդիրների լուծման գործընթացին մասնակցությունը,

19) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ վերապահված այլ գործառույթների իրականացումը:

VI. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

11. Վարչության ընթացիկ գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է վարչության պետը:

12. Վարչության պետն անմիջական ենթակա և հաշվետու է Նախարարին:

13. Վարչության բաժինները ղեկավարում են Բաժնի պետերը:

14. Բաժնի պետերն անմիջական ենթակա և հաշվետու են վարչության պետին:

15. Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է վարչության բաժնի պետերից մեկը՝ վարչության պետի ներկայացմամբ:

16. Վարչության կողմից պատրաստված ներքին գրությունները ստորագրվում են Վարչության պետի, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ նրան փոխարինողի կողմից:

17. Վարչության աշխատողները կարող են ընդգրկվել Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումներով ստեղծվող միջգերատեսչական հանձնաժողովներում և այլ աշխատանքային խմբերում:

18. Վարչության պետի և աշխատողների աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիրազորությունների, շփումների և նեկայացուցչության խնդիրների բարդության և դրանց ստեղծագործական լուծման, գիտելիքների և հմտությունների, իրավունքների և պարտականությունների հետ կապված դրույթները սահմանվում են նրանց կողմից զբաղեցվող քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերով: